

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԺԱՄԸ 17:00-  
ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան**  
**Մասնակցում էին՝**

Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր (համաձայնությամբ)
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Սամուելյան	ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ջ. Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Գ. Սողոմոնյան	Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Լ. Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
Ա. Թովուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ
Ջ. Հասարթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ռ. Ծառուկյան	«Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն
Յ. Գևորգյան	Վաճառականների միության նախագահ
Վ. Գասպարյան	ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքի ղեկավար
Ա. Մնացականյան	ՀՕՄ-ի Երևանի գրասենյակի տնօրեն
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ-ի հայաստանյան գրասենյակի գենդերային ծրագրերի պատասխանատու

Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ
Ա. Խուրդյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
<b>Հրավիրվածներ`</b>	
Վ. Կարապետյան	ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրեն
Լ. Զեյնալյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ
Տ. Ստեփանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ
Գ. Ամիրխանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

1. ՀՀ վարչապետի կողմից պատվոգրերի հանձնում` «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության հաղթողներին

-----  
(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 1-ին հարցով ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը** նշեց, որ ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանվույն գնահատման, հանրահռչակման ու սատարման նպատակով ՀՀ վարչապետի անունից հայտարարվել էր մրցույթ` 4 անվանակարգում: Այնուհետև, ներկայացնելով մրցույթի մանրամասները` նշեց, որ մրցույթը հայտարարվել էր մեկ ամիս առաջ, որի արդյունքում ՀՀ-ի բոլոր մարզերից (այդ թվում` նաև Երևանից) ընդհանուր թվով ստացվել էր 103 հայտ: Այսպիսով մրցութային հանձնաժողովը, որտեղ ընդգրկված էին Կանանց խորհրդի անդամները, հաշվի առնելով նախապես սահմանված չափանիշները, կայացրել է հետևյալ որոշումը. «Լավագույն կին գործատու» անվանակարգում հաղթող ճանաչել Ֆլորա Անտոնյանին (1-ին մրցանակ), Կարինե Ղուկասյանին (2-րդ մրցանակ) և Սուսաննա Մինասյանին (3-րդ մրցանակ): Դրանից բացի` հաղթողներին հանձնվեցին նաև

ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից հաստուկ շնորհակալագրեր, որոնցով մրցանակակիրներին ընձեռնվեց հնարավորություն՝ մեկ տարվա ընթացքում անվճար օգտվելու ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններից:

2. Լավագույն կին նախաձեռնող

-----  
(Վ. Կարապետյան. Տ. Սարգսյան)

**Օրակարգի 2-րդ հարցով հանդես եկավ ՓՄՁ ՁԱԿ-ի գործադիր տնօրեն Վ. Կարապետյանը** և նշեց, որ «Լավագույն կին նախաձեռնող» անվանակարգում հաղթող են ճանաչվել Լիաննա Ալավերդյանը (1-ին մրցանակ), Կարինե Մկրտչյանը (2-րդ մրցանակ) և Արմենուհի Խաչատրյանը (3-րդ մրցանակ): Դրանից բացի՝ հաղթողներին հանձնվեցին նաև ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից հաստուկ շնորհակալագրեր, որոնցով մրցանակակիրներին ընձեռնվեց հնարավորություն՝ մեկ տարվա ընթացքում անվճար օգտվելու ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններից:

3. Մարզի կին բարեգործ

-----  
(Հ. Նաղդալյան. Տ. Սարգսյան)

**Օրակարգի 3-րդ հարցով հանդես եկավ ՀՀ ԱԺ-ի պատգամավոր Հ. Նաղդալյանը** և նշեց, որ «Մարզի կին բարեգործ» անվանակարգում հաղթող են ճանաչվել Անուշ Ծատուրյանը (1-ին մրցանակ), Օֆելյա Կարապետյանը (2-րդ մրցանակ): Դրանից բացի՝ հաղթողներին հանձնվեցին նաև ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից հաստուկ շնորհակալագրեր, որոնցով մրցանակակիրներին ընձեռնվեց հնարավորություն՝ մեկ տարվա ընթացքում անվճար օգտվելու ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններից: Այնուհետև, ՀՀԿ-ի կանանց խորհրդի անունից, մրցանակակիրներին հանձնեց նաև հուշանվերներ:

4. Կին արտադրողի լավագույն ապրանքանիշ

-----  
(Ռ. Ծառուկյան, Ս. Սարգսյան)

**Օրակարգի 4-րդ հարցով հանդես եկավ «Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Ծառուկյանը** և նշեց, որ «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշը» անվանակարգում հաղթող են ճանաչվել Ջուլետա Դանիելյանը (1-ին մրցանակ), Լիդա Սարգսյանը (2-րդ մրցանակ) և Լյուդմիլա Հովհաննիսյանը (3-րդ մրցանակ): Դրանից բացի՝ հաղթողներին հանձնվեցին նաև ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հատուկ շնորհակալագրեր, որոնցով մրցանակակիրներին ընձեռնվեց հնարավորություն՝ մեկ տարվա ընթացքում անվճար օգտվելու ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններից:

5. ՀՀ վարչապետի կողմից պատվոգրերի հանձնում՝ «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության հաղթողներին

-----  
(Վ. Տերտերյան, Լ. Մուրադյան, Ս. Սարգսյան)

**Օրակարգի 5-րդ հարցով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը** և նշեց, որ «Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող են ճանաչվել Արարատի, Վանաձորի և Սևանի քաղաքային համայնքները:

«Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգում ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանը մրցանակները հանձնեց հետևյալ անձանց. Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավար Գագիկ Մուրադյանին (1-ին մրցանակ), Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանին (2-րդ մրցանակ) և Սևանի քաղաքային համայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանին (3-րդ մրցանակ):

6. Լավագույն գյուղապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ

-----  
(Ջ. Հասրաթյան, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 6-րդ հարցով հանդես եկավ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանը** և նշեց, որ «Լավագույն գյուղապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգի՝

1) «Գենդերային հավասարակշռությունը՝ ավագանիների կազմում» ենթասանվանակարգում հաղթող են ճանաչվել Լոռու մարզի Մեծավանի գյուղապետ Սերյոժա Վարդանյանը (1-ին մրցանակ), Սյունիքի մարզի Շրվենանցի գյուղապետ Արմինե Մանուկյանը (2-րդ մրցանակ) և Գեղարքունի մարզի Ջաղացաձորի գյուղապետ Մանվել Մինասյանը (3-րդ մրցանակ)։

2) «Գենդերային հավասարակշռությունը՝ համայնքային ենթակայության կառույցներում» ենթասանվանակարգում հաղթող են ճանաչվել Արագածոտն մարզի Ուջանի գյուղապետ Առաքել Հարոյանը (1-ին մրցանակ), Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղապետ Ալինա Հարությունյանը (2-րդ մրցանակ) և Գեղարքունիկ մարզի Վարսերի գյուղապետ Զավեն Հարությունյանը (3-րդ մրցանակ)։

3) «Գենդերային միջոցառումները՝ համայնքների քառամյա ծրագրերում» ենթասանվանակարգում հաղթող են ճանաչվել Վայոց ձորի մարզի Աղավնաձորի գյուղապետ Աշոտ Գալստյանը (1-ին մրցանակ), Շիրակի մարզի Արեգնադեմի գյուղապետ Աղունիկ Հազրյանը (2-րդ մրցանակ) և Արարատի մարզի Վերին Դվինի գյուղապետ Լյուդմիլա Պետրովան (3-րդ մրցանակ)։

4) «Գենդերային միջոցառումների իրականացումը՝ համայնքի 2011 թվականի ծրագրում» ենթասանվանակարգում հաղթող են ճանաչվել Վայոց ձորի մարզի Մալիշկայի գյուղապետ Մհեր Մովսիսյանը (1-ին մրցանակ), Արմավիրի մարզի Քարակերտի գյուղապետ Մհեր Հարթենյանը (2-րդ մրցանակ) և Շիրակի մարզի Ախուրիկի գյուղապետ Վարդիթեր Գասպարյանը (3-րդ մրցանակ)։

7. Հատուկ մրցանակներ

-----  
(Ա. Միմոնյան, Օ. Մաքբոյ, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 7-րդ հարցով հանդես եկան`**

**1) ՄԱԿ-ի Արդյունաբերական Ջարգացման կազմակերպության Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ա. Միմոնյանը** հանձնեց մրցանակներ հետևյալ անձանց`

- ա. Ջարուհի Անդրեասյան - «ԻՆՍԻ ՆՏԿ» ՓԲԸ-ի տնօրեն (ՀՀ Լոռու մարզ, գ. Հոբարձի),
- բ. Վերա Ջաքարյան - «Թամար տատիկ» ՍՊԸ-ի տնօրեն (ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Օշական),
- գ. Հայկուհի Մարգարյան - «Վայք Ֆրուտ» ՍՊԸ-ի տնօրեն (ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք. Վայք):

**2) ԵԱՀԿ-ի Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Օլիվեր Մաքբոյը** շնորհավորեց «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության բոլոր հաղթողներին և տեղեկացրեց, որ հանդիպում կկազմակերպի նրանց բոլորի հետ` քննարկելու իրենց բիզնեսների զարգացման հարցում առկա կարիքները, ինչը կօգնի ԵԱՀԿ-ին նախապատրաստել աջակցության ծրագիր:

8. Հայտարարություն հատուկ հեռուստածրագրի նախապատրաստման աշխատանքների մասին

-----  
(Ա. Խուրոյան, Տ. Մարգարյան)

**Օրակարգի 8-րդ հարցով հանդես եկավ «Հրապարակում» հեռուստածրագրի ղեկավար Ալինա Խուրոյանը** և տեղեկացրեց, որ «Հրապարակում» հեռուստածրագիրը նախատեսում է մի քանի հաղորդաժամ տրամադրել տվյալ միջոցառման լուսաբանմանը: Արդյունքում նախատեսվում է լուսաբանել (ռեպորտաժների ու պուժենների միջոցով) այն կանանց և համայնքապետերի գործունեությունները, որոնք այժի կրնկնեն իրենց հետաքրքրությամբ և առանձնահատկությամբ:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի փակման խոսքը**

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ևս մեկ անգամ շնորհավորելով բոլոր մրցանակակիրներին՝ մաղթեց նորանոր նվաճումներ ու հաջողություններ: Այնուհետև նշեց, որ տվյալ մրցանակաբաշխությամբ ՀՀ-ում ներդրվեց մի գեղեցիկ ավանդույթ, որն իր դրական արձագանքն ստացավ ՀՀ մարզերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ